

---

**ԲԱՌԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵՁԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ  
ՀԱՏԿԱՆԻՇԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

**ԱՇՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Լեզուն մարդկային հասարակության մշակութային մեծագույն ստեղծագործությունն է: Միջոց, որը իրացվում է հանրության մեջ իբրև տեղեկատվության փոխանցման հիմնական գործիք՝ իր հաղորդակցման գործառույթով: Լայն առունով լեզուն է ապահովում հասարակության պատմական զարգացումը, նրա հարաշարժ կյանքը: Հանրության լեզվական գործունեությունն է նաև հասարակության գոյության հիմնական երաշխիքը և նրա կենսագործունեությունը հասարակական կյանքի բազմավեկտոր մյուս ոլորտներում: Լեզուն՝ որպես մտածողության ձևավորման և արտահայտման միջոց, բանական մարդու (*homo sapiens*-ի) կենսակերպի հիմնական պայմանն է: Սպասարկելով հանրությանը՝ լեզուն արտացոլում և արտահայտում է հասարակական գիտակցությունն իր ողջ բովանդակությամբ ու ծավալով: Այն նաև ապահովում է հասարակության անդամների համակեցությունը, համատեղ գոյությունն ու գործունեությունը, ինչպես նաև հասարակական բազմոլորտ կյանքի կազմակերպումը: Հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց, երբ հանրային գործունեությունը պարտադրապես ստեղծում և ընդգրկում է նորանոր ձևեր և ոլորտներ, լեզուն փոփոխվում, կատարելագործվում և հարստանում է՝ հնարավորություն տալով հանրությանը ծավալելու իր հաղորդակցական գործունեությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ միաժամանակ չխաթարելով լեզվի միասնական կուռ համակարգն ու կառուցվածքը և դառնալով տվյալ հանրության մշակութային յուրօրինակ կատարյալ ստեղծագործություն, որը պատմականորեն կերտվում է տվյալ հասարակության ոչ միայն առանձին տաղանդաշատ անհատների, այլև ամբողջ հասարակության կողմից: Հանրության և լեզվի կապը մեկ օրվա, հաճախ դարի կապ չէ. այն պատմական է, կարող է ձգվել երկար դարեր ու հազարամյակներ, միևնույն ժամանակ կարող է փոփոխվել դարձյալ պատմականորեն (լեզուն կարող է որակապես փոխվել կամ այդ լեզուն կրող հանրությունը վերանալ)՝ պատմահասարակական պայմանների թելադրանքով:

Հասարակության յուրաքանչյուր անդամ իր մեջ ունի հասարակայնորեն ընդհանուր և օբյեկտիվորեն գոյություն ունեցող լեզվական միասնական համակարգը՝ որպես ներունակ հարստություն: Այդ համակարգի իրացումը խոսքային և խոսողական գործունեությունների ընթացքում արդեն ենթադրում է մտածական, ստեղծագործական մոտեցում: Հաղորդակցման գործընթացում, չխախտելով լեզվի հասարակական ընդունված միասնական ու ընդհանուր համակարգը, լեզվակիրը, իր մտածողական գործունեությամբ, նաև զգացմունքներով, հոգեկերտվածքով, հոգեվի-

ճակով, կրթական մակարդակով, օբյեկտիվ իրականության տվյալ երևույթի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքով և այլնով պայմանավորված, կառուցում է իր խոսքը՝ ընտրելով լեզվական համակարգի զանազան տարրեր՝ հնչյուններ, ձևույթներ, բառեր, քերականական իրողություններ և այլն, համադրելով իրար համապատասխան շեշտավորումով, հնչերանգի տարբերակներով և այլն, և ապահովում իր մտածածի և զգացածի ճշգրիտ ու ճշմարիտ կամ հարաբերականորեն ճշմարիտ հաղորդումը: Լեզվակրի անզամ սովորական խոսքի կազմումը և հաղորդումը ինքնին յուրօրինակ ու յուրահատուկ ստեղծագործություն է: Այս ամենը առավել ցայտուն դրսևորվում է գեղարվեստական խոսքի կերտման գործընթացում, երբ գրողը, մնալով լեզվի ընդհանուր համակարգի շրջանակներում, ստեղծագործաբար գործադրում է մարդկային լեզվի բոլոր հնարավորությունները (նա ավելի մեծ ազատություն ունի նաև բառակերտության, փոխառություններ կատարելու, քերականական նորաբանությունների և այլ կարգի լեզվական հնարքների ու հնարանքների օգտագործման մեջ) իր մտածական ու զգացական համակարգերի հաղորդումն ապահովելու համար<sup>1</sup>:

Լեզվի գործադրությունը արդեն ստեղծագործական հատկանիշ է, որը ապահովում է յուրաքանչյուր կենդանի լեզվի մշտական փոփոխությունն ու հարաշարժությունը: Սկզբնական շրջանում քանակական տեսակետից նմանատիպ լեզվական իրողությունների առաջացրած փոփոխությունները կարող են լինել քիչ, հետո՝ աշխուժանալով ավելանալ, ապա՝ տարածվելով ընդգրկել լեզվական ամբողջական շարքեր՝ կազմելով որակ, հարստացնելով տվյալ փուլի լեզվական համակարգը<sup>2</sup> և, ի վերջո, անզամ փոխելով լեզվատիպը: Լեզվի այս հատկանիշներն են նրա նորմալ գոյավիճակը, և սրանք են ապահովում նրա կենդանության գոյը, և յուրաքանչյուր լեզու, ներհյուսվելով տվյալ հասարակության հետ, դառնում է այդ հանրության պատմության վկայագիրն ու անդավաճան ուղեկիցը:

Անչափ կարևորելով լեզվի դերը հանրության կյանքում՝ մարդկությունը մշտապես զբաղվել է լեզվի ուսումնասիրության հիմնախնդիրներով անտիկ աշխարհից մինչև մեր օրերը: Լեզվի բազմաբևեռ ու բազմաբովանդակ բնույթով պայմանավորված՝ մարդկային լեզվի հարցերը քննվել են ոչ միայն **լեզվաբանություն** գիտության շրջանակներում՝ ընդհանուր և մասնավոր դրսևորումներով, այլ նաև ուրիշ գիտությունների: Լեզվաբանությունը մեծագույն նվաճումների է հասել մարդկային լեզվի ինչպես տեսական հարցերի լուսաբանման, այնպես էլ առանձին լեզուների գործնական ուսումնասիրությունների բնագավառներում:

Հայ ժողովրդի տաղանդաշատ զավակները դարերի ընթացքում նույնպես անմաս չեն մնացել համաշխարհային այս գործընթացներից: Հայերենով ստեղծվել է լեզվաբանական հսկայածավալ գրականություն, որում արտացոլված են և՛ լեզվի ընդհանուր տեսական հարցեր, և՛ զանա-

<sup>1</sup> Տե՛ս **Էդ. Աղայան**, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 50-55:

<sup>2</sup> Նմանատիպ իրողությունների առաջացրած փոփոխությունները լեզվական համակարգերում տարբեր դրսևորումներ ունեն. հնչյունական և քերականական համակարգերը ավելի պահպանողական են, քան բառապաշարը, որը ավելի դյուրաշարժ ու զգայուն է, և լեզվի բառային կազմի փոփոխությունները արագ նկատելի ու արձանագրելի են:

զան օտար լեզուների, և՛ հայերենի քննությանը վերաբերող ուսումնասիրություններ:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Էդուարդ Բագրատի Աղայանի լեզվաբանական ուսումնասիրությունների շրջանակները շատ լայն էին: Վաստակաշատ գիտնականը զբաղվել է լեզվի տեսական հարցերի, օտար լեզուների և, հատկապես, հայերենի) բոլոր փուլերի (հիմնախնդիրների ծավալային ուսումնասիրություններով: Ուշագրավ են մեր երջանկահիշատակ ուսուցչապետի՝ բառագիտության տեսական խնդիրներին վերաբերող ուսումնասիրությունները և առաջարկած բազմաթիվ գործնական հիմնարար լուծումները:

Բառապաշարի զարգացումը ամբողջությունն է լեզվի բառային կազմում տեղի ունեցող այն բոլոր փոփոխությունների, որոնք ուղղված են բառային կազմի մակարդակի արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը մի կողմից հասարակական կեցության ու գիտակցության առավել զարգացած աստիճանին, մյուս կողմից՝ լեզվի տվյալ փուլի կառուցվածքին ու համակազմին: Զարգացման մյուս ընդհանուր գործընթացն իրացվում է **բառապաշարի հարստացումով, բառապաշարի իմաստաբանական զարգացումով և բառապաշարի կատարելագործումով**<sup>3</sup>:

Ժամանակակից գրական հայերենը բառապաշարի վերոնշյալ երևույթների պատկառելի պատմություն ունի: Ակադեմիկոս Էդ. Աղայանի գիտական ժառանգության մեջ տրված են դրանց վերաբերող շատ հիմնարար լուծումներ: Նա և հայ լեզվաբանների ճնշող մեծամասնությունը բառապաշարում նոր բառերի առաջացումը կապում են հայերենի պատմական զարգացման գործընթացում մշտապես գործող **բառակազմական կաղապարների**<sup>4</sup> իրացման օրինաչափ իրողության հետ, որը հայերենի արդի փուլում էլ բառակերտության հիմնական և վճռական միջոցն է: Սակայն հարգարժան գիտնականը նոր բառերի առաջացումը կապում է նաև **խոսքիմասային**<sup>5</sup> **փոխանցումների** հետ, որոնք առնչվում են բառերի բառական, ձևաբանական, շարահյուսական հատկանիշների փոխհարաբերությանը: Նա խոսքի մասերի դասակարգման հիմքում դնում է բառերի այդ հատկանիշները, իսկ դրանց դասակարգման ժամանակ վճռորոշ դեր է կատարում բառերի ընդհանուր խոսքիմասային իմաստը, որը սերտորեն կապված է բառիմաստի հետ: Իսկ բառերի իմաստափոխությունը լեզվի պատմական զարգացման ընթացքում գործող իրողություն է, որի հիմունքները<sup>6</sup> բազմաթիվ ու բազմազան են և բառագործածության ընթացքում բառերի փոխանվանական, փոխաբերական և համընթանական կիրառության գործընթացում **խոսքայինից** վերածվում են **լեզվական փոխանունության**, ըստ որում՝ այդպիսի փոխանունություններով բառերը ստանում են նորանոր իմաստներ՝ հետագայում վերածվելով ինքնուրույն բառային իմաստների, ամրանալով բառին որպես նրա կայուն նշանակություն: Այդպես են առաջացել՝ **սուր** (հատու) ածականից՝ **սուր** (երկսայրի հատող ու

<sup>3</sup> Տե՛ս **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 167-168:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 207-291:

<sup>5</sup> Էդ. Աղայանը օգտագործում է **խոսքամասային** եզրույթը, մենք նախընտրում ենք **խոսքիմասայինը**:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 78-101:

խոցող զենք), **խավար** (մթին) ածականից՝ **խավար** (մթություն) գոյականական իմաստը և այլն<sup>7</sup>:

Մեկ ուրիշ աշխատության մեջ էդ. Աղայանը այս տիպի բառերը հստակորեն համարում է համանուններ<sup>8</sup>, քանի որ սրանք միևնույն ձևով, հավասարապես հանդես են գալիս երկու կամ ավելի խոսքի մասերի ոլորտում՝ համապատասխանորեն արտահայտելով տարբեր խոսքամասային իմաստներ այն պատճառով, որ հայերենում տարբեր խոսքի մասերի համար դրանք տարբեր ձևեր չունեն և չեն կարող կազմել: Նորից անդրադառնում է **սուր** բառին, որը շարահյուսական մակարդակում հանդես է գալիս և՛ իբրև ածական (**հատու**), և՛ իբրև գոյական (**զենք**) և տարբեր խոսքի մասերի ոլորտներում տարբեր շարահյուսական դեր ունի, քանի որ այդ բառից ածականի կամ գոյականի հատուկ ձև հայերենը չունի (հմմտ. **սուր դանակ**, **երկսայր սուր**): Այդպես են նաև **խավար** (ածական և գոյական), **առաջ** (մակբայ և կապ), **ապա** (մակբայ և շաղկապ) և նման բառերը: Լեզվի զարգացումը հաճախ հասցնում է նրան, որ փոխանցման ոլորտում ընդգրկված բառը վերջապես զրկվում է իր նախկին խոսքամասային իմաստից՝ պահպանելով միայն նորը, և այդպիսով գոյականից վերածվում է ածականի, ածականից՝ մակբայի, գոյականից՝ մակբայի, բայից՝ գոյականի և այլն<sup>9</sup>:

Ակադեմիկոս էդ. Աղայանը նոր բառերի առաջացման պատճառ է համարում նաև քերականական ձևերի իմաստափոխությունը: Բառերի քերականական ձևերը խոսքի մեջ բազմազան գործածություններ ունեն, և այդ գործածությունների ժամանակ նրանց ընդհանուր քերականական իմաստները մասնավորվում, մասնավոր իմաստների են վերածվում, իսկ երբեմն էլ ստանում պարզապես կապակցական իմաստ: Այսպես, օրինակ՝ *հույսով*, *մտով*, *թանով* ձևերը *հույս*, *միտ*, *թան* գոյականների եզակի գործիական հոլովածներն են, որոնք ունեն ժամանակակից հայերենի գործիական հոլովի ընդհանուր իմաստը, այն է՝ **իրացման քերականական իմաստը**, այսինքն՝ այն միջոցը, գործիքը, հանգամանքը, պարագան և այլն, որի օգնությամբ կամ որի առկայության (բացակայության) պայմաններում իրացվում է գործողությունը: Այնպիսի նախադասությունների մեջ, ինչպիսիք են՝ **Նա միայն հույսով է ապրում** կամ **Թանով փոր չի կշտանա** և այլն, *հույսով*, *թանով* հոլովածները գործածվել են իրենց հոլովական ընդհանուր իմաստի կոնկրետացումով (*հույսով* - հույսի օգնությամբ, *թանով* - թանի օգնությամբ, թանն իբրև սնունդ օգտագործելու միջոցով), մինչդեռ *թանով* ապուր, *մտով* կարկանդակ, *բրնձով* փլավ և նման կապակցությունների մեջ *թանով*, *մտով*, *բրնձով* հոլովածների ընդհանուր հոլովական իմաստները ոչ միայն մասնավորվել, այլև իմաստային նոր երանգ են ստացել՝ ցույց տալով այն նյութը, որից պատրաստվել են ապուրը, կարկանդակը, փլավը: Եթե այդ կապակցությունների հաճախական գործածության հետևանքով ժամանակի ընթացքում գործիական ձևով այդ բառերը փոխանվանաբար օգտագործվեն և արտահայտեն ամբողջ բառակապակցության իմաստը,

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 62:

<sup>8</sup> Տե՛ս էդ. Աղայան, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 143:

<sup>9</sup> Տե՛ս էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 534:

ապա կստացվի գործիականի հոլովածևի անկախ գործածություն, ինքնուրույն բառի իմաստով: Օրինակ՝ **թանով** բառածևը մի շարք բարբառներում գործածվում է որպես ինքնուրույն բառ՝ «թանապուր, թանից պատրաստված սպաս» բառային իմաստով. գործիականի հոլովածևը վերածվել է գոյականի և կարող է հոլովվել, ինչպես բոլոր գոյականները (թանովի, թանովից, թանովով և այլն): Ապա էդ. Աղայանը շարունակում է, ճիշտ նույն ձևով էլ ունենք գրական լեզվի **կաթնով** բառը (կաթով և բրնձով պատրաստվող կերակուր), որ **կաթն** բառի աշխարհաբարյան գործիականի հին հոլովածևն է: Նույն եղանակով էլ **կարծես, ասես, տեսնես** բայածևերը՝ խոսքի մեջ գործածվելով իմաստային մասնավոր երանգավորումով, ժամանակի ընթացքում ստացել են բառային անկախ գործածություն և բառային նոր իմաստ. **կարծես** նշանակում է «թվում է», **տեսնես**՝ «արդյոք», **ասես**՝ «որպես թե»: Նույն ձևով **ինչ** դերանվան **ինչի** և **ինչու** սեռական հոլովածևերը վերածվել են ինքնուրույն հարցական բառերի: «Ժամանակակից հայերենում շատ են այսպիսի իմաստափոխությունների դեպքերը,- գրում է վաստակաշատ լեզվաբանը,- հատկապես վիճակային դերբայների մեջ, այսպես, **գրել** բայի ենթակայական դերբայն է **գրող**, օրինակ՝ դիմում **գրող** քաղաքացի, որ նաև ինքնուրույն բառ է դարձել և օգտագործվում է իբրև գոյական՝ «գեղարվեստական ստեղծագործությունների հորինող, «писа-тель» նշանակությամբ, **խորովել** բայի հարակատար դերբայն է **խորոված**, օրինակ՝ **խորոված** կարտոֆիլ, բայց որպես ինքնուրույն բառ գոյական է՝ «միսը խորովելով պատրաստած ուտելիք, կերակրատեսակ» նշանակությամբ: Այդպես են նաև **ուսանող, ուրացող, հերձվածող, հատված** և այլ գոյականական նշանակություն ստացած բառերը, որոնք դրա հետ միաժամանակ **ուսանել, ուրանալ, հերձվածել, հատվել** բայերի դերբայական ձևերն են դերբայների համակարգում»<sup>10</sup>:

էդ. Աղայանը նշում է, որ այս կարգի իմաստափոխությունները չպետք է շփոթել ներկայացված քերականական ձևերի քարացման հետևանքով տեղի ունեցած իմաստափոխությունների հետ: Երկուսի տարբերությունն այն է, որ մի դեպքում ինքնուրույն բառ դարձած բառը տվյալ ձևով նաև քերականական ձև է համապատասխան հարացույցում, օրինակ՝ **տեսնես** «արդյոք» և **տեսնեմ, տեսնես, տեսնի...**, **կարծես** «թվում է» և **կարծեմ, կարծես, կարծի...**, **խորոված** (գոյական) և **խորովել, խորովող, խորոված, խորովում, խորովելու...**, **թանով** (ապուրը) և **թան, թանի, թանից, թանով** և այլն, մինչդեռ մյուս դեպքերում որպես ինքնուրույն բառ գործածվող ձևը քերականական ձև է եղել լեզվի պատմության անցած փուլերում, ժամանակակից լեզվում համապատասխան հարացույցային համակարգը գոյություն չունի, և հենց դրա հետևանքով էլ նախկին քերականական ձևը չի գիտակցվում որպես այդպիսին (հմմտ. **հասանեմ, հասի, հասից, հասցես, հասցե** գրաբարյան բայական ձևերը, որ մահացել են, և **հասցե** գոյականը, **մասն, մասին, մասամբ** հոլովածևերը և այժմյան **մասին, մասամբ** բառերը և այլն, և այլն)<sup>11</sup>:

Լեզվի ստեղծագործական հատկանիշը հատկապես դրսևորվում է

<sup>10</sup> էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 100:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 98-101:

կենդանի լեզվի բառապաշարում, որը տվյալ ժողովրդի պատմահասարակական միջավայրի արտացոլումն է. բառապաշարը լեզվի ամենահարափոփոխ մասն է, և նրա մեջ տեղի ունեցող փոփոխություններն անմիջականորեն արտացոլում են հասարակական կյանքում կատարվող փոփոխությունները՝ սկսած տնտեսական գործունեությունից, առօրեական հարաբերություններից ու կենցաղից մինչև հոգեկան ու մտավոր գործունեության երևույթները: Օբյեկտիվ իրականության մեջ երևան եկող ամեն մի նորույթ իր անմիջական անդրադարձումն է գտնում լեզվի մեջ՝ համապատասխան բառերի առաջացումով կամ գոյություն ունեցող բառերի իմաստային զարգացումով: Սրա հետևանքն այն է, որ մինչդեռ լեզվի մյուս բաղադրիչները (հնչյունական համակարգ, ձևաբանական և շարահյուսական կառուցվածք) փոփոխվում են շատ երկար ժամանակամիջոցում և աննկատելիորեն, բառապաշարի զարգացումն ու նրանում կատարվող փոփոխությունները տեղի են ունենում շատ ավելի արագ և նկատելի են դառնում համեմատաբար շատ կարճ ժամանակամիջոցում: Հենց բառակերտությունը, բառաստեղծումը, բառակազմությունը կենդանի լեզվի բառապաշարի ստեղծագործական հատկանիշի պատկերավոր, նյութական իրացումն է: Մեր մոտեցմամբ հայերենում նոր բառեր են կազմվում երկու ճանապարհով՝ **գծային** և **ոչ գծային (խորքային)**<sup>12</sup>: Երկուսն էլ բառապաշարի հարստացման ներքին միջոցներ են: Ըստ այդմ՝ տարբերակում ենք **գծային բառակազմություն** և **ոչ գծային (խորքային) բառաստեղծում** եզրույթները:

Հայերենում նոր բառեր կազմելու առավել տարածված, հիմնական եղանակը գծայինն է, երբ նոր բառեր կազմվում են հիմնական և բառակազմական ձևայինների միջոցով՝ **գծային** կամ **ձևային բառակազմություն**՝ իր ածանցային, արմատային, ածանցարմատային տարատեսակներով: Այս դեպքում հիմնական ձևային կամ բառին գծային զարգացման եղանակով (տեսանելի ուղիղ գծի տեսքով) կցվում են նորանոր մասնիկներ, որոնք փոխում են նախկինի ձևական կողմը և բովանդակությունը, իհարկե, նաև խոսքիմասային պատկանելությունը (**ան-տուն, պարզ-որեն, ան-տն-տես-վար-ություն**): Բառակազմության այս եղանակի մեջ է մտնում նաև հապավումը՝ որպես բառաբարդման տեսակ:

Ինչո՞ւ **ոչ գծային (խորքային)** և ինչո՞ւ **բառաստեղծում**: Նախ **ոչ գծային** եզրույթը առաջարկում ենք՝ ի հակադրություն գծայինի: Այն արտացոլում է նաև երևույթի էությունը. «նոր» բառը արտահայտության պլանում չի տարբերվում «հնից». այն ունի հնչույթային նույն կազմը, որևէ արտաքին ձևափոխություն չի կրում:

**Բառաստեղծում**<sup>13</sup>, որովհետև բառակազմության եղանակով կազմված բառը տարբերվում է և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլան-

<sup>12</sup> Տե՛ս Ա. Պ. Հայրապետյան, Արդի հայերենի խոսքիմասային տարարժեք բառերի բառարան, Եր., 1994, **նույնի** Ածանցավոր ածականների խոսքիմասային փոխանցումները ժամանակակից հայերենում, Եր., 1991, **նույնի** Ոչ գծային բառաստեղծումը հայերենում, Եր., 2011:

<sup>13</sup> Հայ լեզվաբանության մեջ **բառաստեղծում** եզրույթը ունի ավելի մեղ մշանակություն և հասկացվում է այն գործընթացը, որը ընկած է նոր բառեր, բառարմատներ ստեղծելու հիմքում և հատուկ է լեզվի ծագման, նախնական կազմավորման գոյակի-ճակին: Երբեմն **բառակազմություն** և **բառաստեղծում** եզրույթները որոշ լեզվաբաններ նույնանիշներ են համարում: Մենք **բառաստեղծում** ենք անվանում նոր բառերի ստեղծման այն բոլոր միջոցներն ու եղանակները, որոնք **բառակազմական** չեն:

ներում, իսկ այս դեպքում նոր բառի կրած փոփոխությունները խորքային են, և սրանք ոչ միայն վերաբերում են բառի բովանդակային կողմին՝ բառիմաստին, այլ նաև փոխվում են նրա քերականական հատկանիշները՝ ձևաբանական առանձնահատկությունները և շարահյուսական կիրառությունները: Այս դեպքում որոշ խոսքի մասերի համար բառաստեղծման միջոց է բառի հարացուցային ամբողջ համակարգը, իսկ այլ խոսքի մասերի համար՝ նրանց արտահայտած խոսքիմասային ընդհանուր քերականական իմաստը, որի միջոցով և ուղեկցությամբ անցում է կատարվում քերականական մի կարգից մյուսին՝ արծանագրելով նոր բառի ծնունդը: **Ոչ գծային բառաստեղծումը** հայերենի քերականագիտության մեջ ընդունված խոսքիմասային փոխանցումներն են, որոնք լեզվի բառապաշարում մշտապես տեղի ունեցող բազմաբնույթ տեղաշարժերի պատճառ են, սակայն մենք այս եզրույթը գործածում ենք ավելի լայն և ընդգրկուն իմաստով: Այս կարգի փոփոխությունները հատուկ են աշխարհի շատ լեզուների<sup>14</sup>. ոչ գծային բառաստեղծումը<sup>15</sup> համալեզվական երևույթ է և հայերենում ունի իր հստակ դրսևորումը: Ներկայացվող երևույթին եվրոպական լեզվաբանության մեջ տարբեր անվանումներ են տրվում, որոշ հեղինակներ օգտագործում են root formation (корневое словообразование, արմատական բառակազմություն), functional change (изменение функций, գործառույթի փոփոխություն), zero derivation (безаффиксное словообразование, զրո ձևույթով բառակազմություն), la derivation impropre (несобственная деривация, անիսկական բառակազմություն), la transposition (транспозиция, փոխանցում), la translation (транслация, փոխանցում)։

Հայերենի տեսանկյունից լեզվական փաստերը ցույց են տալիս, որ **ոչ գծային բառաստեղծումը** ունի ընդգծված պատմական բնույթ՝ իր **մասնակի և լիակատար** փուլերով և **տարածամանակյա** ու **համաժամանակյա** դրսևորումներով, բազմազան ու բազմաթիվ **տեսակներով**, **ուղղություններով**, **հիմունքներով** ու **հիմքերով**<sup>16</sup>:

Ոչ գծային բառաստեղծումը տարբեր լեզուներում տարբեր արժեք ու արդյունավետություն ունի: Հայերենում, անշուշտ, մեծ դեր են խաղում գծային բառակազմության եղանակներն ու միջոցները, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերենի բազմադարյան բառապաշարի փոփոխության և զարգացման համար որոշակի դեր ունի նաև ոչ գծային բառաստեղծումը (*դպրոցական, զինվորական, բջջային, անդորր, խավար, ապստամբ, հիվանդ, վարպետ, ծգնավոր, օդաչու, թթու, առաջ, ապա, հենց, այնուամենայնիվ, տակ, չափ, նման, հետ, մեկ, մի, ամբողջ* և այլն, և այլն)՝ որպես լեզվի բառապաշարի կատարելագործման ու հարստացման, ինչպես նաև նոր բառերի ստեղծման ու մարդկային լեզվի ստեղծագործական հատկանիշի իրացման միջոց:

<sup>14</sup> Տե՛ս Ա. Պ. Հայրապետյան, Ոչ գծային բառաստեղծումը հայերենում, էջ 20-27:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 26:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 34-264:

**Բանալի բառեր** – բառակերտություն, խոսքիմասային փոխանցումներ, բառակազմական կաղապարներ, ստեղծագործական հատկանիշ, լեզվական փոխանցումներ, քերականական իմաստ, գծային բառակազմություն, ոչ գծային բառակազմություն, խորքային բառաստեղծում

**АПОТ АЙРАПЕТЯН – Словообразование как способ реализации языкового творчества.** – Язык – основной способ передачи информации в социуме. Каждый носитель языка хранит в памяти общую и объективно существующую в обществе единую языковую систему, применение которой в процессе коммуникации является своеобразным творчеством. Наиболее ярко это выражается в словообразовании. В статье указаны следующие способы словообразования в армянском языке: *линейное (морфемное)*, которое на протяжении веков являлось основным способом обогащения и развития лексики, и *нелинейное (глубинное)* – результат изменений значения слова, его морфологических особенностей и синтаксической роли. Слова, образованные двумя различными способами, отличаются друг от друга и в выразительном, и в смысловом плане.

**Ключевые слова:** *словопроизводство, частеречные переходы, словообразовательные модели, творчество, метонимия, грамматическое значение, линейное словообразование, нелинейное словообразование, глубинное словотворчество*

**ASHOT HAYRAPETYAN – Word Formation as a Means to Realize the Creative Peculiarities of Language.** – Language is the greatest cultural creation of human society and is realized as a primary tool for communication. Each speaker is a bearer of socially and objectively existing common language as a system of inherent qualities. The functioning of the mentioned system in communication is a specific creative process itself. This creativity is most obviously demonstrated in word formation. Academician Ed. Aghayan singled out the main tools of word formation in Armenian. According to our approach the methods of word formation in Armenian are: **linear/morphemic/word formation**, which for centuries has been a dominant tool in enriching and developing the Armenian vocabulary, and **nonlinear/inner/word formation** which is the result of a specific modification of meanings, morphological features and syntactic applications of a word. Both methods have been productive throughout the historical development of the vocabulary of Armenian language, especially in its present phase. Words created through the application of the mentioned methods differ from each other in expression and content.

**Key words** – *word creativity, parts of speech transmission, word formation patterns, word creativity, metonymy, grammatical meaning, linear word formation, nonlinear word formation, conversion*